ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. ապրիլի 5-7-ը Վրաստան
կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
Արման Խոջոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝
Վրաստան, ք. Թբիլիսի՝ 2021թ. ապրիլի 5-7-ը

4. Հրավիրող կողմը՝
-

5. Գործուղման նպատակը՝

Հայկական արտադրության ապրանքների (գինի, կոնյակի սպիրտ, ծխախոտ)՝ Վրաստանի տարածքով տարանցիկ տեղափոխման ժամանակ առաջացած հարցերի քննարկում և հնարավոր լուծումների մշակում

6. Քննարկված թեմաները՝

- Վրաստանի տարածքով Հայաստանից դեպի այլ երկրներ կոնյակի սպիրտ և գինի տեղափոխելու ընթացքում առաջացող, այդ թվում՝ մակնշմանն առնչվող խնդիրների քննարկում
- Խաղողի Մսխալի, Սապերավի և Ռքաձիթելի սորտերի փոխադրման ընթացքում ի հայտ եկող խնդիրների քննարկում
- Հայաստանում խաղողի Կախեթ տեսակի արտադրության ու Վրաստանում Կախեթի աշխարհագրական անվանումների տարբերակմանն առնչվող հարցերի քննարկում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- Վրաստանում ՀՀ դեսպան Ռուբեն Սադոյանի հետ միասին հանդիպում Վրաստանի շրջակա միջավայրի և գյուղատնտեության նախարար Լևան Դավիթաշվիլիի հետ: Հանդիպմանը քննարկվել է գյուղոլորտի տարբեր ճյուղերում երկկողմ համագործակցության հեռանկարներին առնչվող հարցերի լայն շրջանակ: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել համատեղ ջանքերով քայլեր ձեռնարկել տարանցիկ գոտում իրականացվող ստուգումները դյուրացնելու ուղղությամբ՝ Վրաստանի տարածքով Հայաստանից դեպի այլ երկրներ կոնյակի սպիրտ և գինի տեղափոխելու ընթացքում առաջացող խնդիրների մեղմման նպատակով: Այս համատեքստում, ավելորդ խոչընդոտներից խուսափելու նպատակով, զրուցակիցները դիտարկել են Վրաստանի տարածքով փոխադրումների կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը նախապես պատրաստելու հնարավորությունը: Արծարծվել են խաղողի արժեշղթայի վերահսկողությանը, գինու կադաստրի ստեղծմանը, ֆերմերների ռեգիստրացիոն համակարգի ներդրմանը, ոռոգման արդիական համակարգերի կիրառմանն առնչվող մի շարք այլ հարցեր:

- Հանդիպում Վրաստանի շրջակա միջավայրի և գյուղատնտեսության նախարարի տեղակալ Օթար Շամուգիայի գլխավորած պատվիրակության հետ: Պատվիրակության կազմում էին նաև Վրաստանի Գինու գործակալության տնօրենը, Մտավոր սեփականության գործակալության տնօրենն ու փոխտնօրենը, Մաքսային ծառայության արտաքին կապերի վարչության պետը և Մաքսային վարչության պետի տեղակալը, Ճանապարհային դեպարտամենտի տնօրենը և նախարարության մի շարք այլ պատասխանատու անձինք: Հանդիպման ընթացքում կողմերի միջև քննարկվել են տարածաշրջանային ծրագրերի իրականացման հնարավորությունները, ինչպես նաև Վրաստանի տարածքով Հայաստանից դեպի այլ երկրներ կոնյակի սպիրտ և գինի տեղափոխելու ընթացքում առաջացող, այդ թվում՝ մակնշմանն առնչվող խնդիրների լուծման ուղիները: Օրակարգային թեմաներից է եղել խաղողի բերքահավաքի և վերամշակման վերահսկման մակարդակը բարձրացնելու նպատակով համատեղ մեխանիզմների մշակումը՝ այդ ոլորտում Վրաստանի հարուստ փորձի հիման վրա: Հանդիպման ընթացքում ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ Մսխալի, Սապերավի և Ռքաձիթելի խաղողի սորտերի փոխադրման ընթացքում խնդիրների վերացման վերաբերյալ: Անդրադարձ է կատարվել նաև Հայաստանում խաղողի Կախեթ տեսակի արտադրությանն ու Վրաստանում Կախեթի աշխարհագրական անվանմանը: Վրաստանը մի շարք երկրներում գրանցել է «Կախեթի» անվանումը, որպես

աշխարհագրական տեղանուն (Geographical Indication), իսկ հայկական Կախեթ խաղողի սորտը մակնշման ժամանակ շփոթմունք է առաջացնում և օրենքով արգելվում է այդ մակնշումը: Այս խնդրի առնչությամբ կողմերը պայմանավորվել են ստեղծել աշխատանքային խումբ, որը կուսումնասիրի Վրաստանի Կախեթի տեղանվան պահպանման և, միաժամանակ, Հայաստանում արտադրվող Կախեթ խաղողի սորտի գինիների անխոչընդոտ վաճառքի հնարավորությունը:

- Հանդիպում Վրաստանի Գինու ազգային գործակալության տնօրեն Լևան Մեխուզլայի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են խաղողագործության և գինեգործության ոլորտներին առնչվող հարցեր, մասնավորապես խաղողի տնկարկների քարտեզագրման և էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման մեխանիզմները, աշխարհագրական տեղանունների ստեղծման և գրանցման գործընթացները, խաղողի մթերման արժեշղթայի վերահսկողությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպումների ընթացքում Վրաստանի տարածքով Հայաստանից դեպի այլ երկրներ կոնյակի սպիրտ և գինի տեղափոխելու ընթացքում առաջացող խնդիրների լուծման ուղղությամբ ձեռք բերված պայմանավորվածությունները վավերացնելու և ամրագրելու նպատակով՝ առաջիկայում՝ վրացական պատվիրակության Հայաստան նախատեսվող այցի շրջանակներում, նախատեսվում է ստորագրել երկկողմ համագործակցության համաձայնագիր:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Գյուղատնտեսության ոլորտում փորձի փոխանակման նպատակով առաջիկայում նախատեսվում է վրացական պատվիրակության այցը Հայաստան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

09.04.2021թ.